Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 6 - 5 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
22 դեկտեմբերի 2023 թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻՆ SCOPUS ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) աշխատակիցներին, ասպիրանտներին և հայցորդներին Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրերում հրապարակումների համար հոնորարներ տրամադրելու կարգը (այսուհետ՝ կարգ) բխում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2024 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2021-2026 թթ. «Բաց գիտության» ռազմավարության» պահանջներից և որդեգրած քաղաքականությունից:

2. Սույն կարգի նպատակն է խթանել համալսարանի աշխատակիցների, ասպիրանտների և հայցորդների գիտահետազոտական գործունեության ակտիվության բարձրացումն ու հրապարակումները Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրերում՝ նպաստելով համալսարանի, ինչպես նաև համալսարանի ակադեմիական կազմի վարկանիշի և միջազգային ճանաչելիության բարձրացմանը:

3. Սույն կարգով սահմանվում են Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված հրապարակումների համար համալսարանի աշխատակիցներին, ասպիրանտներին և հայցորդներին հոնորար տրամադրելու պայմանները և կարգը:

2. SCOPUS ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Հոնորարը տրամադրվում է համալսարանի աշխատակիցներին, ասպիրանտներին և հայցորդներին Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում փաստացի հրապարակված (էլեկտրոնային և (կամ) թղթային) և ինդեքսավորված յուրաքանչյուր գիտական հրապարակման համար:

5. Հոնորարը տրամադրվում է, եթե Scopus գիտատեղեկատվական շտեմարանում հրապարակված աշխատություններում համալսարանը նշված է որպես հեղինակի աշխատավայր և (կամ) ուսման վայր (affiliation):

6. Հեղինակին (հեղինակներին) հոնորար տրամադրվում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ առանց հարկերի և պարտադիր այլ վճարների:

7. Համալսարանի աշխատակից հանդիսացող համահեղինակների առկայության դեպքում տրամադրվող հոնորարի գումարը հավասարաչափ

բաժանվում է համահեղինակների միջև: Համալսարանի աշխատակից չհանդիսացող համահեղինակներին հոնորար չի տրամարվում:

8. Հոնորարը ստանալու համար հեղինակը (հեղինակները) գիտական աշխատության փաստացի հրապարակումից և ինդեքսավորումից հետո պետք է եռամսյա ժամկետում ռեկտորին ներկայացնի (ներկայացնեն) դիմում և անհրաժեշտ տեղեկատվությունը (ցանկը կցվում է): Դիմումն ու անհրաժեշտ տեղեկատվությունը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով:

9. Ռեկտորի հանձնարարությամբ գիտության բաժինը ստուգում է գիտական աշխատության հեղինակի (հեղինակների) կողմից ներկայացված դիմումում նշված տվյալների իսկությունը, հավաստում է հրապարակման ինդեքսավորված լինելու փաստը, համապատասխանությունը սույն կարգով նախատեսված պահանջներին և համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ռեկտորին հոնորար վճարելու վերաբերյալ:

Սույն կետում սահմանված տվյալների իսկության հավաստման և (կամ) հերքման հիմքը Scopus գիտատեղեկատվական շտեմարանների պաշտոնական կայքէջում զետեղված տեղեկատվությունն է:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում հոնորարը վճարվում է ռեկտորի համապատասխան հրամանով՝ դիմումի ներկայացման օրվանից տասնօրյա ժամկետում:

11. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում դիմումը մերժվում է՝ ներկայացման օրվանից տասնօրյա ժամկետում:

12. Հոնորարի չափը ամրագրված է և կախված չէ հեղինակի (հեղինակների) պաշտոնից, գիտական աստիճանից և գիտական կոչումից:

ՑԱՆԿ

SCOPUS ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

Համալսարանի ռեկտորին ներկայացվող դիմումը պետք է պարունակի՝

1) հեղինակի (հեղինակների) Ա.Ա.Հ., պաշտոնը համալսարանում, հեռախոսը, էլեկտրոնային փոստի հասցեն,

2) գիտական աշխատության վերնագիրը, ամսագրի անվանումը և համարը (գրքի դեպքում՝ գրքի վերնագիրը), հրապարակման էջերը, տարեթիվը,

3) հոդվածի DOI-ն, ամսագրի ISSN-ը, իսկ մենագրության դեպքում՝ ISBN-ը,

4) հրապարակման հղումը,

5) Scopus Author ID հղումը (հղումները):